

нству. Подчеркиваются идеи справедливости и свободы, социального равенства, благородства и чести.

## ABOUT THE LITERARY RELATIONS BETWEEN RAFFI AND SHILLER

A. S. BAGOYAN

The article is devoted to the study of a robber's character in the novels "The Robbers" by F. Shiller and "The Memoir of a Cross Stealer" by Raffi. On the basis of synthesizing and comparison are such peculiarities which argue the influence of Shiller's ideas on several works of the Armenian great novelist, particularly on the novel "The Memoir of a Cross Stealer". The general traits of the acts, the development of extracts, the nature of characters and the issues of morality are analysed which deal with the nobility and the clergy. The ideas of justice, social equality and honour are underlined in the article.

## ԱՌԱՍՊԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բ. Գ. ՂԱՐԻԲՅԱՆ  
ԳՊՀ շրջանավարտ

Մինչ «բզկտված հոգիների փիլիսոփայությամբ»<sup>1</sup> գրականագիտությանը ներկայանալը՝ ստեղծագործական առաջին շրջանում լույսընծայած պատմվածքներն արդեն իսկ ճշտում են Ավագյանի աշխարհագացողությունն ու գեղագիտական ըմբռնումները: Այս մասին գրեթե ոչինչ չի ասվում արձակագրին նվիրված հոդվածներում ու գրախոսականներում: Դրանցում հիմնականում մատնանշվում է վերջինիս ստեղծագործության այս կամ այն առանձնահատկությունը («Յեղիմակի խոսքը սեղմ է, զուսպ, առաջին հայացքից փաստին արձագանքող, բայց կա կյանքի ընդհանրացված ընկալումը, թափանցող հայացքը, մեղմ, բայց վերջնական պատասխան տվող խոսքը»<sup>2</sup>, «Ասելիքը փոքր հիմքի վրա սպառող, անհամեմատ սուղ արտահայտչամիջոց պահանջող ստեղծագործություններ են դրանք»<sup>3</sup>, «Ավագյանի պատմվածքներին բնորոշ են ներքին կիրքն ու արտաքին անդորրությունը: Դրանատիկ պատմությունը ոճի մեջ ստանում է հարթ ու «անփույթ» մակերես: Գրողն այնպես թեթև ու «անստույգ» է պատմում, կարծես ուզում է ասել, այս ամենը դժվար է, դաժան, բայց սրանք չեն

<sup>1</sup> Այսպես է Ավագյանի «Հարավային տենդը» բնորոշում Ս. Աթաբեկյանը: Տե՛ս **Աթաբեկյան Ս.**, Բզկտված հոգիների փիլիսոփայությունը, Գրական թերթ, 1971թ., N25, էջ 2:

<sup>2</sup> **Արզումանյան Լ.**, Արդար կյանքի ջատագովությամբ, Սովետական գրող, 1983թ., N1, էջ 126:

<sup>3</sup> **Հովհաննիսյան Ա.**, Տասը կտոր ճշմարտություն, Սովետական Հայաստան, 1966թ., ապրիլի 16, էջ 3:

եղել, ուղղակի, հնօրյա լեգենդներ են, որ միայն պիտի պատմենք ու հիշենք»<sup>4</sup>, «Ավագյանը խոսքի ու պատկերի առավել սեղմության կողմնակից է, ըստ որում՝ տարածության տնտեսման նրա սկզբունքը չի վնասում ներքին իմաստին»<sup>5</sup>, «... նա չունի շռայլ գծեր, մեղմախոս է և կարծես վեհերոտ»<sup>6</sup>, «Նա դուրս չի գալիս բնական սահմաններից, գրում է զուսպ, ժլատ, խուսափելով պերճաբանությունից ու բազմաբառությունից, ձգտում է գտնել առարկայի ու ապրումի ճշգրիտ լեզուն»<sup>7</sup>):

Ավագյանի արձակուն երազայինի ու իրականի փոխներթափանցման պայմաններում դժվարանում է դրանց հստակ գիտակցումը: Ողբերգական դեպքից՝ «փոթորիկից հետո» անհատի ներաշխարհում ի մի են ձուլվում անիրականն ու հավաստին: Իրողությունը հատուկ էր Ջոհրայի հերոսին: Եթե վերջինս, փախչելով կյանքի գորշությունից, ապրում էր երջանիկ անգիտությամբ, ապա Ավագյանի երազող հոգիները, դեն ամենելով «պատին», յուրովի են իմաստավորում ներկան: Նրանք կառչում են հիշողություններին, որոնք տվյալ դեպքում ոչ թե անցյալի ճշգրիտ արտացոլումներ են, այլ պատումի մեջ ծնվող առասպել- հեքիաթներ: Երևույթը քննվում է և՛ անհատական, և՛ համամարդկային տեսանկյունից:

Հերոսի ներաշխարհում իրականը վերածվում է երազի, երազը՝ իրականի: Հյուսվում է մարդկային ճակատագրի առասպելը, որ որպես այդպիսին և՛ եղել է, և՛ չի եղել, ուստի համապատասխան նախաբանով էլ բացվում է՝ «եղել է, չի եղել»: Նազան տատն («եղել է, չի եղել») ու անտառապահ Ղազարը («Երբ ծերանում է անտառապահը) հասել են կյանքի սահմանագծին: Նրանցից յուրաքանչյուրն ստեղծել է իր հեքիաթը: Գաղթի դժնդակ օրերի միջով անցած կնոջ աշխարհը «խտացվել է կարճ պատերով ու ավելուկի թփերով շրջափակված կանաչ, կախարդական այգում»<sup>8</sup>, որտեղ ամեն ամառ հավաքվում է գերդաստանը: «Հին աշխարհում մի աղքատ» մարդու, «չար թագավորի, քարացած աղբյուրի»(64) պատմության հետ մեկտեղ տատը թռռներին ու ծոռներին սեփական կյանքի հեքիաթն է փոխանցում: Բայց նրա հոգու տեմբերին անծանոթ քաղքենիները, դրանք «ստռաշնի» համարելով, ոչ միայն արգելում են, այլև անհոգ հեռանում են՝ «ետևում թողնելով Նազան տատի բզկտված, քամված կանաչ աշխարհը»(65): Կյանքի վերջալույսին հասած մարդու մտահոգությունները հասկանալի են «օտարի աղջկան», ում և վստահվում է տատի հեքիաթը: Նա Կարինեին է հանձնում նկուղի ժանգոտված բանալին, որտեղ «մի հին, փայտյա սնդուկում» թաքցնում է իր անցած-գնացած կյանքի բեկորները» (66): Անհատի ներքին տագնապները չքանում են այն ժամանակ միայն, երբ վստահ է արդեն իր հեքի-

<sup>4</sup> **Աթաբեկյան Ա.**, Բզկտված հոգիների փիլիսոփայությունը, Գրական թերթ, 1971թ., N25, էջ 2:

<sup>5</sup> **Ավագյան Ա.**, Թախծի ու հավատի ուժը, Գրական թերթ, 1967թ., մարտի 31, էջ 2:

<sup>6</sup> **Ջոհյան Ա.**, Ելույթ Հայաստանի գրողների III համագումարում, Երկերի ժողովածու, հ. 12, Երևան, 1990թ., էջ 527:

<sup>7</sup> **Թամրազյան Հ.**, Արվեստի մի գեղեցիկ էջ, Ավագյան Ա., Վերջին հանգրվան, Երևան, 1982թ., էջ 9:

<sup>8</sup> **Ավագյան Ա.**, Վերջին հանգրվան, Երևան, 1982թ., էջ 61: Այսուհետև մեջբերումները լինելու են հիշյալ ժողովածուից՝ փակագծում նշվելով էջը:

աթի հավերժությանը. «Եվ տատիկն սկսում է.

եղել է, չի եղել...» (66):

Երազն ու իրականությունը բախվում են նաև Ղազարի ընկալումներում: Ծերունու հիշողության մեջ խառնաշփոթ կերպով են ուրվագծվում անցյալի դեպքերը; որոնց հեղինակ թյուրիմացաբար իրեն է համարում: Սխալմունքի մեջ արձագանքվում են մարդկային հոգու կարոտները: Ուրիշների վեհ արարքները սեփական անձին վերագրելու փորձը անտառապահի երազների առարկայացումն է: Առասպելական գեղեցկությունների տենչը, իրականության մեջ արձագանք չգտնելով, արտահայտվում է պատկերավոր մտածողությամբ: Միջավայրի թերահավատ հայացքներին ի պատասխան՝ մարդն ստեղծում է անձնական կյանքի հեքիաթը՝ բովանդակալից դարձնելով անգույն կենսակերպը: Տարիներ առաջ «կանաչ- կարմիր մի եղնիկ» է հայտնվել հերոսին. «կանգնեց Ղազարոսի դիմաց և տղամարդու լեզվով ասաց. «Ջահել անտառապահ, որսորդների փորած հորում վերից քեզ պարզև է ընկել»: Ղազարոսը քանու պես սլացավ և որսորդների փորած հորի մեջ տեսավ մի բարալիկ, վախվորած աղջիկ»(114): Վերջինս սունկ հավաքելիս մոլորվել է ու ընկել որսի համար նախատեսված թակարդը: Պատմությունն իրական է: Սուսամբարն այն կիմն է, որի հետ Ղազարը «Ժամով, պատարագով» պսակվել է: Նոր ժամանակները ծերունու համար գորշ ու անմխիթար են, մենության դատապարտող, ուստի լեզենդը ներմուծվում է կյանք՝ այն նախնական որակներով բովանդակելու. «Դրսում աշնան արևով խաղաղ օր էր, ծառերին ոչ մի տերև չէր դողում, բայց Ղազարոսը հեռավոր քանու ձայն լսեց: Անտառային հին քանու ձայն էր դա, փոստատար Ասատուրների, դուրգար Վաղինակների, Փարսադանների, ջրաղացպան Վանոսների ու Սանասարների ժամանակներից եկող քանու ձայն» (114):

Ավագյանն առանձին դիտարկումների միջոցով հասնում է փիլիսոփայական ընդհանրացման. «—...Ժամանակին ի՞նչ մարդիկ են եղել...» (221): Հերոսի վերաբերմունքն անցյալի հանդեպ ինքնանպատակ չէ: Նա համոզված է, որ մարդն այդպիսին ներկայացել է նախկինում: Աստիճանաբար ստեղծվել է նրա բնական դեմքը: Այս առումով անհատի անցյալի ու ներկայի հակադրումը ստանում է համաժամանակյա խորք: Առաջինը բերում է առասպելական ոգին, որի դեմ գործում է ներկան և որի վկայակոչումով է մարդը դիմում դեպի երազը՝ ապագան:

Ժամանակակից իրականությանը հատուկ ձանձրությամբ ու հոգևոր սնանկությունը ոչ միայն առանձին հերոսի, այլև սերունդների հայացքն են ուղղում դեպի անցյալ՝ նախնական ու դրանով իսկ ներքին արժեքների անխաթար միջավայր. Թևան հորեղբայրը («Թևան հորեղբայրը») փոստատար Ասատուրների ժամանակների բարոյականության կրողն է: «Անտառների լուռ մարդը» պատերազմի պատճառով որբացած եղբայրներին ոտքի կանգնեցնելու համար այնպիսի գոհողությունների է զնացել, որ «գորքերում էլ չեն կարող գրել»(216): Հարազատների հոգսը չի թողել անձնական երջանկության մասին մտածել, ընտանիք ունենալ. «դարձել էր անտառների լռակյաց ոգի» (217): Թևանը բնության մասնիկն է. «նրա լացն էլ էր լուռ, մի տեսակ շոգ անտառային, երկի այդպես միայն ծառերն են լաց լինում» (217): Բնաշխարհի մարդուն՝ անտառապահին խորթ են եսակենտրոն մղումները: Հեքիաթն ավանդում էր, որ «կրտսեր որդին է տանը թև ու թիկունք լինում, ինչպես կռացած ծառը պահող հենափայտը, իսկ մնացածը՝ միջ-

նեկն ու ավագը, էնպես, այսինքն՝ եղած, թե չեղած: Հիմա ոնց որ փոխվել են ժամանակները»(210): Կրտսեր սերունդը թորգոմի կերպարով ժխտում է ավագին՝ Թևանին. «Նրանց ջուրը մի առվով դժվար էր գնում» (217): Փոքր եղբորն անընդունելի է, որ վերջինս, հեռուստացույցի դիմաց նստելու փոխարեն, պետք է «մթին կածանները չափչփեր, ծառերի ու եղնիկների հանգիստը հսկեր»(218): Անտառապահն ակունքներին հավատարմությամբ ու համապատասխան բարոյական ընկալումներով հակադրված է քաղաքակիրթ աշխարհին անդամագրված իրավաբանին. «Կրտսեր եղբայրն իրենից, Թևանից, ծնողների գերեզմաններից հեռու կանգնած մարդ էր. երբեմն նա այնքան նմանվում էր արդարադատության կշեռքը ձեռքին հին գիպսե արձանին» (216): Լեգենդի տրամաբանությանն այլ ընթացք է տրվել ժամանակակից իրականության մեջ:

Աշխարհը փոխվել է բացասական իմաստով, հետևաբար՝ անհատի հայացքն ուղղվում է առասպելական գեղեցկություններին: Թորգոմի որդին՝ Կարենը, այն ապագան է, որի «հենափայտը» ոչ թե հայրն է, այլ վերջինիս ավագ եղբայրը. «— Կարենս պապին է քաշել, եղբորս՝ Շնավոնին, ժամանակին ի՞նչ մարդիկ են եղել...» (221): Նոր սերունդը պետք է որ ընդհատված առասպելի շարունակողը լինի. «աշխարհի ամենալավ մարդը ախպերս էր՝ Շնավոնը, հետո էլ՝ Թևանը, հետո էլ Կարենս, մնացածները խուրդա-մուրդա բաներ են... » (221): Թորգոմի անունը շարքի հաջորդականության մեջ ընդգրկված չէ: Գալիքի հիմքը բարոյագրված ներկան չի կարող լինել:

Մոտեցումը միանգամայն պատճառաբանված է: Հոգեկան որոնումների ճանապարհին ներկան «պատ» է, որին բախվում է անհատը. «Նրա համար էլ, ինչպես շատ շատերի, աշխարհում եղած բոլոր լավ բաները եղել էին մի ժամանակ, իրենց երբեմնի ծննդավայրում՝ լավ օդն ու ջուրը, լավ հացը, լավ մրգերն ու լավ մարդիկ. հիմա չկան, աշխարհից իսպառ վերացել են նախկին հավատամքն ու վստահությունը, նախկին ուրախությունն ու սերը:

—Ուրախությունը դարձեր է հնարովի,— ասում էր պառավը,— սերն ալ մասխարա» (330):

Հերոսների կողմից աննկատ չի մնում անհատի մանրացման փաստը. «ավելի խելամիտ են դարձել, հարկ եղած դեպքում ավելի լավ են կարողանում խորամանկել, այսինքն՝ ավելի համոզիչ» (197): Ասվածը տարբեր առիթներով հաստատվում է ուրույն աշխարհընկալում ունեցող մտավորականների կողմից: Նրանք բոլորն էլ ելք են փնտրում «կապարե օդից»(166), որ պարտադրել է միջավայրը: Հերոսներից յուրաքանչյուրը մարդկային պարզ, պայմանականություններից զերծ փոխհարաբերությունների կարիք ունի: Անհատի էությունը միտվում է բնական վիճակների, որն անընդհատ բախվում է քաղաքակրթության բերած «պատին». «Շիտակ ու առաքինի մարդկանց հիմա պետք է ճրագով որոնել» (160): Գնալով խտանում են գորշ գույները և մարդկության անցած ճանապարհն իմաստավորվում է փնտրված արժեքների գերակայությամբ. «—... ես հավատացած եմ, որ մեր ծնողների ժամանակ մարդիկ ավելի պարզ են եղել իրենց անմիջականությամբ, իսկ հիմա, մեր ժամանակակիցները չունեն այդ շիտակությունը, փորձում են անմիջականություն խաղալ, բայց ծածկամիտ են, խրամանկությունը երբեմն հասցնում են նենգության» (160):

Արձակագիրը ներկայացնում է ծանոթ իրականությունը՝ բնորոշ հոգեբանու-

թյամբ ու որոնումներով. «Երբ Ավագյանը ընտրում է քաղաքի միջավայրը, նրա քայլվածքը դառնում է հաստատուն, գրիչը՝ վստահ, և այլևս չի զգացվում խոսքի զարդարանքի հետևից ընկնելու կարիքը, որ այնպես հրապուրում է նրան, երբ ուզում է խոսել գյուղի կյանքի՝ թեև իրեն հափշտակող, բայց չապրած պոեզիայից»<sup>9</sup>: Խորհրդահայ կյանքի պատկերները գրողի կենսափիլիսոփայության հետևողական շարունակությունը հանդիսացան: Որպես այդպիսին քաղաք-գյուղ թեմատիկ բաժանում չկա. Վերջինիս գրողն անդրադառնում է միայն գեղագիտական ծրագրի շրջանակներում: Նրա որոնած լեզբնդը նոր օրերում արդարացնում են բնությանը, արմատներին մոտ կանգնած հերոսները: Հեղինակի մշակած պարզ ու անխաթար ակունքների պոեզիան այստեղ արդեն մարմնավորում է գյուղը՝ իբրև բնական միջավայր: Այն պատկերման առարկա չի դառնում, այլ, հակադրվելով ժամանակակից անհատի ճղճիմ կենսաձևին, խորհրդանշում է երազայինը:

Կյանքի հարմարավետությունից տուն-թանգարաններին բնորոշ սառնություն է փչում, միօրինակ աշխատանքը սպանում է հոգին: «Երկաթե թոքեր» են պետք շրջապատի կարծրացած օդը շնչելու համար: Դավիթ Ապրեսյանը («Ուշացումով»), Կարենը («Կարեն, վերադարձիր տուն»), Գարեգին Պետրովիչը («Իմ լավ հայրիկը»), Վարադաատ Ամատունին («Մենակյացը»), Շաքեն («Իմ փութանցիկ ամառը») և ուրիշները ներկայացնում են պարզության ձգտող մտավորականին: Նրա որոնումներին խորթ է բարեկեցիկ, բայց անիդեալ առօրյան. «Սիրտ խառնելու չափ ամեն ինչ տեղը տեղին դրված այդ հյուրասենյակում օդն այնպես է խտացել, որ թվում է միայն դանակով կարելի է կտրատել» (204): Ներկան կազմող ընտանեկան անտեղի վեճերն ու մանր հոգսերը միապաղաղությամբ ներքին դատարկություն են պարտադրում:

Նյութն ունի հեղինակային սկիզբ, որ յուրաքանչյուր անգամ հարստացվում է հոգեբանական նոր նրբերանգներով: Անընդհատ հենման կետ փնտրելն ու չգտնելը անմիջապես արձակագրի դրաման է եղել: Ինչ վերաբերում է գյուղին, ապա այստեղ մարդը ժամանակավորապես վերագտնում է ներքին հավասարակշռությունը: Կարենի ու Դավիթ Ապրեսյանի համար այն նաև ծննդավայր է՝ հոգեկան անեղծ որակների սկիզբ:

Աննշան «Փոթորիկից հետո», որ կարող է լինել անգամ կանացի հայացքը, տակնուվրա է լինում անհատի ներաշխարհը (Դավիթ Ապրեսյան, Կարեն): Երեսուն տարվա հեռավորությունից մարդը հանրագումարի է բերում ապրածը՝ հայտնաբերելով, որ շրջանցել է կյանքը (Գարսևան). «Այնքան չափեցի-չափչփեցի, որ ուշացա...» (119): Չկայացած երջանկությունը՝ «փութանցիկ ամառը», խռովում է Շաքեի միօրինակ կյանքի անդորրը՝ վերածվելով հուշ-երագի: Ակնհայտ է, որ, բացի փնտրելն ու չգտնելը, բոլորի «կյանքից ինչ-որ կարևոր ու լավ բան քիչ թե շատ տանուլ» (161) է տրվել: Եվ քանի որ հնարավոր չէ վերստանալ կորուստը, մնում է ծիծաղով հաղթահարել վիշտն ու շարունակել «քայլել այս աշխարհի ճանապարհներով» (32): Որոնումը կյանքի առանձնահատկությունն է: Վեհ հոգիները հակված են ապրել արժանապատվորեն: Նրանցից յուրաքանչյուրը գրկաբաց է ընդունում շիտակ, ազնիվ մարդկանց և «գրնգուն ծիծաղով ցաքուցրիվ է» անում «պատահական փշալարերը» (Գարեգին Պետրովիչ):

<sup>9</sup> *Հախվերդյան Լ.*, Երկեր և կերպարներ, Երևան, 1964թ., էջ 64:

վիչ, Ամատունի): Բայց հերոսներից ոչ մեկին չի հաջողվել հասնել երջանկության լիարժեք գիտակցման, ինչով և պայմանավորված է անհատի որոնումների հավերժականությունը. «– Քո անկեղծությանը հավատում եմ, բայց որ ես երջանիկ կլինեմ, այ՛, դրան չեմ հավատում: Ցանկությունը պետք է փոխադարձ լինի, երկ-կողմանի. մենք տարբեր հորիզոնների թռչուններ ենք» (204):

Իրականությունից ակնկալիքներ չունեցող հերոսի ապավենը նորից հուշառասպելն է: Մարդը «որքան հեռանում է իր անցյալից, այնքան շատ բան է տեսնում այնտեղ»(77): Մանրուքները, չնչին միջադեպերն անգամ, որ կարող են լինել «խոր աշնան տերևաթափի տակ լքված մի նստարան», «տափաստանային մոռացված մի խարույկ», նորովի են վերափմաստավորվում՝ դառնալով «վաղ տարիքում տեսած մի գողտրիկ երագ»(77):

Յուզն առօրյա հիասթափություններին դիմակայելու միջոց է, անգամ որից գրկված են շատերը. «Մենք ի՞նչ մեղք էինք արել, որ մեզ տնավեր արին, ջարդեցին, առևանգեցին, քամիների բերանը օգած՝ ցրեցին աշխարհով մեկ... Թութին, լույսի նման այս սիրուն աղջիկը, ինչո՞ւ է համր ու խուլ աշխարհ եկել... Գնչուներն ինչո՞ւ են գարնանային այս բաղերը, բոստանները, օրոր- շորոր այս բարդիները թողած գնում, հասնում հարավ՝ հնոցային երկնքի տակ խաշխաշ հավաքելու... Եվ, վերջապես, ախպորս ասեմ, ինչի՞ է նման էս աշխարհը...» (19): Յերոսի ներքին հարցադրումների դիմաց չի ուշանում մեռնողի բարձրաձայն հնչող պատասխանը. «Յե՛չ մի բանի» (19):

Այստեղ է, որ անհատը կառչում է լեզենդին: Եթե ոմանց հաջողվում էր գունագարդել անցյալն ու ապրած պահին ապավինել, ապա մյուսների մոտ «նեցուկը միրաժային է, հիանալիորեն գեղեցիկ, բայց... անշոշափելի» (51): Որքան էլ խաբկանք թվա «վերացական մի աշխարհի գոյությունը», անլույս ներկան հերոսին մղում է այն որոնելու. «Իսկ ես չեմ հակադրվի, չեմ կարող, իմ փաստարկները կլինեն անշունչ» (151): Անհատի ճակատագրի ողբերգականությամբ ամրապնդվում է այն համոզումները, որ «անդրօրհեղեղյան ինչ-որ կյանք կա, որ մեր երագները ասուպների ոտնահետքեր են, ինչ-որ անիմանալի աշխարհից եկած երեխաների ճիչերի, ինչ-որ անիմանալի լեռներից թափվող ջրվեժների արձագանք... » (151):

Այս պահից սկսած լեզենդի նվաճումը դառնում է անհրաժեշտ: Ստեղծագործական հաջորդ շրջանում, հիմնվելով նախորդ փուլի փորձի վրա, Ավագյանը մշակում է կայուն գեղագիտություն՝ հյուսելով անհատի դրամայի ու հավերժական երագների պատմությունը: Տարիներ շարունակ գրողի երևակայությունը զբաղեցրած նյութի գեղարվեստական որոնումները հաջող հանգուցալուծում գտան «Յարավային տենդ» ժողովածուում:

## СМЫСЛ МИФА В РАССКАЗАХ АБИКА АВАГЯНА

*Б. Г. ГАРИБЯН*

В статье представлены рассказы Абики Авагяна, изображающие советскую армянскую жизнь. В них автор выявляет героя, испытывающего горечи реальности, для полета души, которому непримлемы маленькие проблемы повседневной жизни.

Для осмысления бытия, с целью оправдания существования, в реальность вводится миф. Человек

создает свою сказку, которая одновременно является проявлением стремлений разных поколений. Будущее человечества будет продолжением прерванной сказки.

## THE SIGNIFICANCE OF THE MYTH IN ABIK AVAGYAN'S STORIES

*B. G. GHARIBYAN*

The article presents the novels of Abik Avagjan representing Soviet Armenian life. In it the author shows the hero who is a suffer of reality, whose sole is not known the day life problems. The existence to mean, existancee to justify, into a reality enters tragedy. A man creates his tale, which is at the same time the expression of seeking of different genders. The future of humanity is not the unideal future. Dut is the existence of the stopped and still going on of the tale.

# ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ «ՄԻՐԻԱՎ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ԵՎ ՅՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԱՅՍ ԿԱՆԱԶ-ԿԱՐՄԻՐ ԱՇԽԱՐՀԸ» ԿԻՆՈՎԻՊԱԿԻ ՀԱՄԵՄՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

**Յ. Է. ՄԿՐՏՉՅԱՆ**

*ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի  
Հայոց լեզու և գրականություն բաժնի  
մագիստրատուրայի շրջանավարտ,  
ԳՊՀ Հանրության հետ կապերի  
և լրատվության բաժնի մասնագետ*

Գրականությունն անվերջանալի մայրուղի է, որի խաչմերուկներում հատվում են ոչ միայն իրականությունն ու հորինվածքը, կյանքն ու երազայինը, այլև հանդիպում են այդ գրականության կարկառուն ներկայացուցիչները՝ գրողները:

Այդպիսի խաչմերուկներից մեկում էլ «հանդիպեցին» հայ արձակի երկու վարպետները՝ Ակսել Բակունցն ու Յրանտ Մաթևոսյանը: Այս դեպքում ևս առիթը նրանց ստեղծագործություններն էին՝ համապատասխանաբար «Միրիավ» պատմվածքը և «Այս կանաչ-կարմիր աշխարհը» կինովիպակը:

Ակսել Բակունցի «Միրիավ» պատմվածքը գրվել է 1926-1932թթ., որի թեմայով էլ 1966թ.-ին Մաթևոսյանը գրել է իր «Այս կանաչ-կարմիր աշխարհը» կինովիպակը: Այստեղ պետք է շեշտել այն հանգամանքը, որ Մաթևոսյանն իր ստեղծագործությունը գրել է ոչ թե Բակունցի պատմվածքի հիման վրա, ոչ թե վերցնելով ու վերաշարադրելով եղածը, այլ նոր մոտեցմամբ է մեկնաբանել այն՝ պատմվածքի հիմքում ընկած գաղափարները վերցնելով ու փոխադրելով նոր հարթություն: Կինովիպակը գրելիս Մաթևոսյանը ծանոթացել է նաև թեմային հարող այլ նյութերի հետ: «Սրանք, մեկ էլ Բակունցի «Միրիավը» չգիտեմ իրարու ինչպես